# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 2017թ. սեպտեմբերի 4-ին կնքված N ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-17/4 գնման պայմանագրի

ք. Երևան «29» « 12 » 2017թ.

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և քաղաքացի Նորայր Նահապետյանը (նույն. քարտ 006167563, տրված 18.07.2017թ. 044 կողմից) (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.Կողմերը որոշեցին՝

1.1 Կատարողի կողմից ծառայության մատուցման ժամկետը համաձայն Կողմերի միջև 04/09/2017թ. կնքված N ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-17/4 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.6 կետի, երկարաձգել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով՝ պայմանագրի գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2018թ-ի հունվարի 30-ը, Պայմանագրի թիվ 1 հավելվածով ամրագրված ծառայության մատուցման ժամկետը՝ 3-րդ, 4-րդ եռամսյակը խմբագրել, սահմանելով ծառայության մատուցման ժամկետը ՝ «30.01.2018թ.»:

1.2 Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետի, Պայմանագրով նախատեսված ծառայության ծավալները ավելացվում է պայմանագրի ընդհանուր գնի 10 % -ի չափով՝ մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որը իր մեջ ներառում է Վարորդական ծառայության մատուցման վճար՝ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ և Ֆուրգոնի վարձակալության վճար՝ 260000 (երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ**

**ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 68**

**Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,**

**Ձեյթուն մ/ճ**

**Հ/Հ 163518012543**

**ՀՎՀՀ 02602449**

**Գործադիր տնօրեն՝**

**Ա. Աբրահամյան**

(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**Նորայր Նահապետյանը**

**Հասցե՝ ք. Մասիս, 4փ. 77 տուն**

**Բանկը՝ ՎՏԲ Բանկ Հայաստան**

**Հ/Հ 16026028797606**

**Նույն. Քարտ 006167563**

**ՀԾՀ՝ 1311740538**

**Տրված՝ 18.07.2017թ. 044 կողմից**

**Ն. Նահապետյան**

(ստորագրություն)

Կ.Տ